

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՆԻՐԷ, Ապրիլի փողոց

ՄՈՒԴԱԹՅԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser

à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.

Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար մասնաւոր պայմաններ:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆՈՒՆ ԶԱՄԱՐ

Տարեկան ՂՂ. ողջ 100

Վեցամսեայ » 35

Եռամսեայ » 20

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԱՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ


Տարեկան ՁՐ. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒՄՈՒ

ՈՒՆԻ ԴՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԿԱՐԹԻ ԵՒ ԶԱՐԴԱՐՈՒ ԹԵՐԵՐ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՆՓԻՍԻ

ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐՑ ՄԸ

Երեւր օրէն — Եթէ ՏԵՐԸ կամենայ — վիճակիս ազգային ամենէն բարձր իշխանութիւնը — Ընդհանուր Ժողովը — լայնաբերկ նիստ մը պիտի ընէ Պէն-էլ-Սուրէնի Առաջնորդարանին մէջ:

Մեր պաշտելի Երեսփոխանները հրաւիրուած են իրենց ազգաւիրական պատգամները կատարելու, ներկայ գտնուելով Ժողովի մը ուր... չեմք ինչ ալ կըլլայ:

Որքան որ հանդիսաւոր ըլլայ — ազգային շահերու տեսակէտով — այդ օրուան թուականը, մենք պատճառներ ունինք կարծելու թէ իրաց արդի վիճակը — statu quo, դիւանագիտորէն խօսելու համար — մազի մը չափ փոփոխութիւն չպիտի կրէ և այսօրուան գործերը այնչափ գէշ պիտի կարգադրուին որքան կը կարգադրուին ասկէ առաջ և պիտի կարգադրուին ասկէ ետքն ալ, եթէ Ժողովուրդը և մամուլը ձեռք ձեռքի տըլած՝ աւելի պահանջկոտ չըլլան իրենց իրաւունքներուն մէջ, իրաւունքներ որոնք անբռնաբարելի են որքան աստիճան որ օրինական ըլլալէ չեն դադրել:

Այս իրաւունքներու կարգէն է ապահովագրէս այն պահանջը, զոր յայտնուն Ժողովուրդին, այսօր կը հրապարակենք և որուն վրայ կը հրապարակենք ուղղորդութիւնը ամեն անոնց որ ուրբաթ օրը Ժողով ընելու կոչուած են:

Չկայ հայաբնակ բազա մը, գիւղ մը, անկիւն մը ուր կրթական խնդիրը — կարեւորագոյնը խնդիրներուն — այնքան այսպիսի կերպով անտեսուած ըլլայ, որքան հոս, Երեւանի մէջ:

Ասիկա ճշմարտութիւն մըն է որուն վրայ ոչ ոքի իրաւունքը կուտանք տարակուսել, քանի որ երեսուն և քանի մը տարիներու անցեալ մը մեր գէնն է, կը խօսի և կը բողոքէ:

Անշուշտ ուրբաթ օրուան Ժողովին մէջ չէ որ այս էապէս կենսական հարցը պիտի լուծուի, հակառակ օրակարգին մէջ վարժունիի խնդիր մը գտնուելուն:

Շատ շատ այդ նիստին մէջ պիտի որոշուի թէ վարժուհիին անունը Սօֆի ըլլալու է կամ Մարի. և յետոյ...

Մեր սպասածը, մեր պահանջածը այդ չէ սակայն:

Հասարակութիւնը ատկէ աւելին պահանջելու իրաւունքը ունի և ատանկ մասնակի, աննշան կարգադրութիւն մը չէ որ գոհացում պիտի տար հանրութեան մէկ օրինաւոր և սուրբ փափաքին:

Երեւր, և աշխարհիս և ոչ մէկ կողմէ՝ կտակարարի մը վերջի կամբը այսքան ողորմելի և չարաչար կերպով դեղձուի չէ ենթարկուած որքան Գահիրէի մէջ Գալստեան կարգադրի, այդ անպարտական բարեբաւին կամբը:

Այդ անուս մարդը, այդ խեղճուկ գաւառացին, այդ շարժումով վանցին, ասկէ քառասուն տարի առաջ, աւելի խելացի, աւելի լուսամիտ և աւելի ազգասէր գտնուած է քան ամեն անոնք որ իրմէ ետքը և մինչև այսօր իրարու կը յաջորդեն այդ փառաւոր կտակը իր նպատակին հասցնելու գործին մէջ:

Ոչ ոք խղճահարութիւնը ունեցել է, երեսուն տարիէ ի վեր, Երեսփոխաններու կամ քաղաքական Ժողովի անդամներու այդ աշխարհին մէջ, տալու Գալստեանի փափաքին այն իրականացումը որուն կարելիութեանը համար օտակայն տարեկան հազար ոսկիի եկամուտ մը ձգելու չէ մոռցած այն մարդը որ եթէ այսօր ողջ ըլլար, խաղաղանի հարուածով դուրս պիտի վաճառէր այն անխիղճ ազաները որ յանդգնած էին իր անունը դրնել դրան մը վրայ ուրկէ երբէք լոյսի ճառագայթ մը չէ անցած ներսի խաւարը փարատելու համար:

Գալստեան վարժարանը հայհոյութիւն մըն է վանցի կարապետին երեսին նետուած:

Բարոյականի սպանդանոց մը, ապուշներու դարձնարան մը, իմացականութիւններու կախաղան մը, ահա՛ ինչ եղած է Գալստեան վարժարանը ըստման իր տարիներու երկայն շարքին մէջ:

Չէ գտնուել այդ իրարու յաջորդող անհատներու և տեսակ տեսակ Ժողովներու մէջ գտնէ մէկը որ խղճահարութիւնը ունեցած ըլլայ ակնարկ մը նետելու վարժարաններու վրայ որոնց վիճակը երբէք չէ գաղթած ողորմելի ըլլալէ:

Ամբողջ խնդրերին, ուժերին, ժամանակին սպառած են թերեհի, է-

րիկ կնկան, ապառիչի և ասոնց պէս ջնջին խնդիրներով, և վայրկեան մը իսկ չեն մտածած բարեբեւ կրթական հաստատութիւններու վիճակը որ երբէք գոհացուցիչ չեն եղած իրենց հիմնարկութեան օրէն ի վեր: Տասնեակ հազարներով ոսկիներ սպառուած են այդ նպատակով առանց սակայն փարայի մը օգուտ տալու ազգին:

Փոքր Ասիոյ գաւառական ազգային վարժարանները, որ կիրակիէ կիրակի եկեղեցիի պնակներու մէջ ձգուած հինգ հինգ փարաներով կը մատակարարուին՝ հազար անգամ աւելի արդիւնք տուած են քան մեր վարժարանները որ տարեկան հազար ոսկիի եկամուտ ունին:

Ինչ է ասոր պատճառը:

Յ. Ա.

(Մնացեալը յաջորդում)

ՄԱՐՏ

Գեորգ Աղան և իր կինը Թագուկ Տուտուն՝ խոր ծերութեան հասեր էին. այնքան խոր որ ա՛լ հողին կը գլչեր կոր: Երկուքն ալ ինքնուրու անցած էին: Ծերեր կան որոնց տեսքը անխորժ է. կըսած, կուտած, տեսակ տեսակ անտեղի բռնաւորումով՝ գանակեղով ծամածռութիւններով բազմաշարքար դէմք մը ունին որ սոսկում կ'ազդէ: Իմ ծերերս աս տեսակէն չէին: Տարիներու այդ հնգամեայ բեռին տակ՝ իրենց մարմինը շիտակ կը մնար, կանգուն ու գետ՝ առողջ յամառ կորովի յետին մաքառումով մը, խոր ու պինդ արմատներ ձգած կեանքի գերագոյն ճիգով մը: Կարծես ձմրան ճիւղեր որ թէն զրկուած իրենց ծաղիկներէն և տերեւներէն՝ կը մնային տափակին ամուր ու ողջ իրենց շղատ մերկութեանը մէջ: Դեռ կարծիք արին կ'ապրէր այդ թուամբ ու ճմրթկուած միտերուն տակ, ինչպէս կէս մարած կրակ մը մոխիրի խաւերու ներքեւ: Բնութիւնը զիրենց սքանչելի խառնուածքով մը օծտեր էր. այն ոսկրուտ երկար բարակ ու արիւնտ մարմինը ունէին որ ոչ արիւնշատութեան այրիները ունի և ոչ անարիւնութեան մոխիրն ու անդերը, որ չոր է, որ իր նիհարութեամբ՝ հեղձուցիչ ճարպի բացակայութեամբ՝ իբր շանթարգելով՝ պաշտպանուած է մոտ ափունջատութեան փորձանք՝ այն կայծակնաթափ, գահավէժ հիւսնաթափներուն դէմ որոնք մէկէն ի մէկ, առանց ուն ազգարա-

րութեան, կը խուժեն վրադ պայթողակի՝ և քեզ անդի աշխարհը կը տանին առանց պլակայութեան. և իր հարուստ ու մաշուր արիւնին շնորհիւ՝ յաւիտենապէս ապահովագրուած պն անանուն և անթիւ տկարութիւններուն, հիւսնութեանը գէմ սրտը ծածկամտօքն կը սպրդին մարմնոյն մէջ և ա՛լ դուրս չեն ելլար, ու կ'սկսին զայն մազմազ կրակով մեղցունել, ծծելով արիւնը կաթիլ կաթիլ. կրծքով միտը նետարդ առնարդ:

Աւելցուցէ՛ք այդ սքանչելի խառնուածքին վրայ գեղացիին երկու մեծ առաքինութիւնները, — աշխատութիւնը, կեանքի պահպանիչ, առողջութեան մարդիչ, և հիւսնային համբերութիւնը, կենսական խնայողութեամբ անտուկ, մայր ամեն տեսական յաղթութեան և երկարակեցութեան, — և լուծած պիտի ըլլաք այդ խորախոր ծերութեան գաղտնիքը:

Ծերերուն և հիւսնայիններուն համար ապրելը ա՛լ նուիրական պարտք մը կըլլայ կատարելիք. ինչպէս մարդկային շատ մը բաներ, ասիկա ունի իր հաճոյքները և իր տաղանդները, այնքան ճիշդ է որ մարդու երջանկութիւն կը փնտռէ և կը գտնայ աւելին գէշ վիճակին մէջ, և գործողութիւն լաւագոյնին մէջ, այնքան ճիշդ է որ երջանկութիւն և գոթագոթութիւն՝ ըստաճները ամենուրեք տուն տեղ կըլլան միտքին, բովբովի, բիթ բիթի կ'ապրին հաշա՛ վարպետորդի երկու խանութպաններու պէս որոնք իրարու հետ կը համաձայնին յաճախորդ խաբելու համար... Մեր ծերունիները լաւ ըմբռնել էին այս նուիրական պարտականութիւնը: Տասնեակներ տարիներէ ի վեր ամենօրեայ պայքար մը կը մղէին մահուան դէմ: Տարուէ տարի՝ յարածուն կը սաստկանար իրենց մէջ կարելի եղածին չափ երկար ապրելու տենջը, պէտքը կարելի եղածին չափ ուշ մեռնելու, չաղաչուք վճարածով հեռաւոր թուականի մը յետաձգելու: Վսեմ պայքար, իրենց մտքին բոլոր ճիգը և անոր հնաւոր փորձառութիւնը, իրենց էութեան բոլոր կամեցողութիւնը և ողջ ուժերը գրաւուած էին այս տիրապետական նպատակէն, այս մշտաօճէն: Եւ զաղափարէն: Գրեթէ հանճար կը վատնէին մահուան հետ այս ամենօրեայ ոգի իրոյն ոգորումին մէջ: Ինչ հնարքներ, ինչ խելքեր չէին բանեցնել իրենցմէ հեռու բոլոր փորձանքները սրտն կընային իրենց առողջութիւնը կասկածի՝ և կեանքը վտանգի տակ

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՂԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

ձգել, բռնաբերել և մայրախնամ հոգածութիւններով, իմաստուն ու մանրակրկիտ ըզզուլութիւններով կը փաթկեն, կը շրջապատեն ինքզինքնին, չենթարկուելու համար մահուան յոռի կատակներուն, չարազէտ խաղերուն. միշտ արթուն և «ոյ՛ է ան» պոռալու պատրաստ, սրտեւ և սրականջ ուշադրութեանց պահակախումբ մը գիշեր ցերեկ կը հսկէ իրենց շուրջը՝ մահուան դէմ պաշտպանելու համար իրենց անձը, ի դերն հանելու համար անոր գաղտնի խորամանկ սպրդումները, խորանկ դաւերը, կամ յետ մղելու անոր բացէ ի բաց յարձակումները. Այսպէս, իրենց կեանքը կարելի եղածին չափ հեռու կը պահեն զիպուածէն ու վտանգէն, մահափոխ տխմար արկածէն. Հանգստութեամբ ու կանոնաւորութեամբ՝ անոր քիչցած ջուրերը կը հոսեցնեն անողջապահական բարի ու անխախտ սովորութեանց հարթ ու անընթաց յատակին վրայէն:

Ծերութիւնը՝ բնականաբար՝ շատ կը վախճային ձմեռէն, մահացու եղանակ, գիտաւոր մատակարար Նորին Կայսերական Աւագանիքը՝ Մահուան, Բայց մահաւանդ Մարտաւիւնէն. Արեւելի մէջ ձմեռը և հիւանդութիւնը աւելորդապաշտ սարսափ մը կը գտնուին մարտէն. վտանգաւոր անցք մը կը համարեն զայն ուր կարելի է կեանքը վրայ տալ. Արեւելիցին այս զգացումը կը թարգմանէ «խենթ» սակիթով զոր արտաքին զուտ անցուցած է յիմարանցի գգակի մը պէս. Իրաւ խենթամիտ. որքան յեղեղուկ, քմահաճ, գնդուի մը պէս անկայուն, անառակ որդի մը պէս աստանդական, մոռցունքոտ մէկու մը պէս խոսափողորժ, գէշ սիրահարի մը պէս խաբէրայ... Մէկ օրուան մէջ չեմ գիտեր քանի օր կը փոխէ և քանի երկինք կը հանէ կը հագնի. Առտուն անձրեւ կ'ազդարարէ, ցորեկէն՝ կայծա՛ր արև կը խաղայ մեզի, իրիկունն ալ տեղատարափ ձիւնով մը վարագոյրը կը գոցէ. Առտունը կան յորս՝ մարտը՝ սուտ չի խօսիմ. կարող է ձիւնը, անձրեւը, արևը, փոքրը, տաքը, պարը, մոլ լամպն ու ընդ ճառագայթը ամենն ալ իրար խառնել, բարդել բարդազրել և յառաջ բերել անանկ օր մը որուն ոչ անուն կարելի է գտնալ ոչ ալ նմանութիւն և ուրիշ հիւանդութիւն միայն կարելի է անել. Ծեր եղբիւր և եթէ կրնաս դէմ տուր, կարծես տուր օդի ասանկ խելագարութիւններուն, յանկարծական փոփոխումներուն. Քանիսն՝ գիտեմ զոր Մարտը...

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (24)
ԺԲԶԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԿԵՊՏԱԿԱՆ ՈՍՐԵՆԵՐԷ ՆԵՐՇՆՁՈՒԱՆ ՎԷՊ

ԳԼՈՒԽ Զ.

Փաշային փոքրիկ ուղեւորները իւր տեւողութենէն չէր վրկպած, և առանց դեռ իր ամօթխաճութիւնը վերաւորելու, չ'կրնայով ըմբռնել այդ իշխանական դաւին նպատակը, կը, կընայ իր բովանդակ հպարտութիւնը վարուելու այդ եղանակէն գոգմեցաւ:

Արդէն քանի օրէ ի վեր է որ ուղեւոր խօսիչ. բայց միշտ Սթա Ապուհայի ազնւութիւնը, անոր մեղմիկ ու բարեհամբոյր ընթացքը զինքը ի գործով շարժած էին...

անդիլի աշխարհը զրկեց, քանի քանի ծերութիւններ և հիւանդներ. Գեորգ Աղան և իր կնիկը շատ լաւ գիտէին ասիկա և կը դողալին երբ մարտը կը մօտենար, կը դողալին... «Կենէ կուգայ կոր խենթը... խենթը եկաւ... ԱՐԱՄԵՆ, սա ալ անցունէիք» իրենց աճանկ կուգար որ եթէ յաջողէին մարտը անվտանգ, ողջ առողջ անցունել, տարի մը կեանք ևս շահած էին:

Մ. Ս. ԿԻՒՐՃԵԱՆ
(Շար. յաջորդ թուով)

ՊԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԹԷ ՍԱՆ ՍԹԷՖԱՆՈՒՆԸ

Մինչև քանի մը տարի առաջ արտասահմանի հայ մամուլը — Տաճկաստանի չէր կրնար իր կարծիքը աղատօրէն արտայայտել, հետեւաբար ասիկա պիտի գտնուէր — միահաղոյն կը գոչէր թէ Հայ ազգը տաճկական մահացու լուծէն ազատելու միջոցներէն, ի մէջ այլոց, ունենցէ հատ մը — ամենէն գերազանցը — զոր գործածել պարտէինք. այդ միջոցը, ըստ ամենուն՝ Պերլինի դաշնադրութեան 61րդ. յօդուածին գործադրութեան պահանջովն էր: Պերլին է ի նկատի առնել որ ոչ ոք ասիկա անիրականաբար կը գտնէր:

Այս յօդուածով մենք զիտաւորութիւն չունինք հոս մի առ մի, յառաջ բերել զործելու այն միջոցները որով ճամբայ եղանք այդ նպատակաւ. Այդ մասին վրայ գրելը ուրիշ առիթ մը վերապահելով, մենք առայժմ պիտի ջանանք շօշափել տարրեր կէտ մը:

Այն ահաւի աղետները — պատմութեան մէջ նմանը տեսնուած չէ — որոնց՝ մահաւանդ վերջին տարիներուն մէջ՝ ենթակայ եղած է տաճկաստան — չըսելու համար ուսուցանող ալ, որուն համար քիչ տառապանք չէ կարծեմ, հանդիսատես ըլլալ իր եղբայրներուն մորթուելուն և օգնելու անկարող գտնուելէ զատ՝ ազգային ճնշումներուն ենթակուելը և որոնք՝ եթէ դեռ ևս շարունակուին՝ Հայ ցեղը բնաջնջ ընելու սահմանուած են. անտարակոյս մեծապէս ազդեցին մեր մտածելու եղանակին վրայ, շուրջման մէջ ձգելով մեզի. Այսպէս ահա երկար տարիներ անընդհատ մեծ մեծ յոյսեր տածելէ յետոյ այդ ըլլալիք 61րդ. յօդուածին վրայ, այսօր, ա՛լ ճարտահաւաստ, ամենք կը կարծեն որ եթէ՝ փոխանակ անոր՝ միայն և միմիայն Սան-Սթեֆանոյի

ինչպէս կշտամբէր զանի... նոյն իսկ յանցաւոր էր միթէ, այդ ծիծաղասէր յիմար աղիւկը որ, իր կորստեանը պատճառ ըլլալու ատեն իսկ՝ այնպէս պիտի կարծէր որ իրեն աղէկութիւն կ'ընէ... Բայց փաշային հանդէպ անոր բռնած ընթացքը, այն եռանդը որով խօսած էր իրեն անոր վրայ, որոշել տուած էին ժերմէնի որ ազդարարութիւն ընէ անոր. Հարկ էր վերջ մը դնել իր պատիարակուհոյ արժանաւորութեանը համար վտանգաւոր այդ կատակեղութեան:

Սթա Ապուհայ իր բարեկամութեամբ խօսքերուն հանդէպ շրմոքած կը կենար. այսպէս ուրեմն, իր խորամանկութիւնը մէջ տեղ եղած էր և պատիարակուհին իրեն՝ դէմ արտահայտէր... Ինչպէս ինքզինքը արդարացնէր. Ինչպէս վերադառնալ շահէր իր սիրեցեալ ժերմէնին բարեհաջակութիւնը և

16րդ. յօդուածը գոյաթիւն ունենար, մենք այս անտանելի կացութեան մէջ ինչպէս հեռի՛ լաւագոյն վիճակի մը սահմանուած պիտի ըլլայինք:

Տեսնենք սակայն թէ այդ այդպէս է. Անոնք, այսինքն արտասահմանի Հայերը, որ 61րդ. յօդուածին գործադրութիւնը իրականաբար կը գտնէին, չէին կրնար երեւակայել թէ 19րդ. դարու լուսաւորեալ աշխարհին մէջ, Եւրոպայի խիղճ պիտի ընէր, յայտ յանդիման, ձեռնամաճ ակնատես հանդիսանալ, մինչև իսկ քաջալերել, այն ահաւի կոտորածները որոնք հեղեղի պէս Սասունի լեռներէն սկսելով տարածուեցան ամբողջ Տաճկաստանի վրայ, մինչև իսկ Եւրոպայի քթին տակ՝ Պոլսոյ մէջ և գոյեղեքն աւելի գոյեղեք դարձուցին մեր միշտ թշուառ հայրենիքը, ուր սակայն բնութիւնը Երեմի գետեղած էր. Հիմա, թէև շատ ուշ, լաւ կը զգանք որ աւելի աղէկ պիտի ըլլար, եթէ Պերլինի այդ դաշնադրութեան վրայ նուազ յոյս տածելով, մեր ընթացքը չափաւորէինք: Ահա այս սին յոյսին տեւողակտով միայն մեզի աղէտաբեր եղած է այդ յօդուածը:

Սակայն ինչ կը նշանակէ ըսել որ, փոխանակ անոր, եթէ միայն Սան-Սթեֆանոյի դաշնադրութեան 16րդ. յօդուածը գոյաթիւն ունենար, Մեծն Ռուսիա երբեք պիտի չներէր որ Օսմանեան Պետութեան maniaque կայսրը՝ Սուլթան Ապտուլ Համիտ՝ ընէր բոլոր այն ինչ որ ըրաւ մինչև հիմա:

Քրիստոնէից պաշտօնաւոր Ռուսաստանը երբ բարի կամեցած է Հայոց. Սան-Սթեֆանոյի 16րդ. յօդուածը մեզի դէմ լարուած թակարդ մ'էր և ձեռնուկ ջարձելով մեզի համար մինչև այսօր Սև Սագայէներ միայն եղած են և այդպէս ալ պիտի ըլլան որչափ ատեն որ անոնք Ռուսիոյ ընդօր Գահին վրայ բազմին. Տաճկաստանի մէջ հազարաւոր Հայոց Ռուսազաւանութեան զիմեքն անգամ ունէ օգուտ մը յառաջ չը բերելէ զատ տաճկիները առել ևս զերգելու միայն պիտի ծառայէ. Այդ պատճառով իրենց յոյսահատ ժողովուրդի մը խենթ ու խելառ ծիգերէն մին է, իր կացութիւնը բարեւորելու նպատակով գործուած:

Մոսքովներու մեզ նկատմամբ բռնած ընթացքը Լօպատինովի «Հայաստանը առանց Հայի կ'ուզենք»ին մէջ տեսնալու է:

Մեր այս ծանր վիճակին մէջ ինչպիսի ցաւալի պատճառներէն մին եղած է նաև Յրանալի Ռուսիոյ հետ նիդակակցելը, այն Յրանալին՝ որ, նմանապէս ինքն ալ ինքեւրը... Ռուսիա սխալած էր... Ժերմէն միտներէն այդչափ շատ վեր՝ էր ուրեմն... այդչափ հպարտ, այդչափ վէս... — Օրերով, ըսաւ վերջապէս, եթէ առանց գիտնալու վնաս հասցուցի ձեզի, պատիժս գտայ, յիշախ. այդպէս սրբողած կերպով մի՛ նայիք ինծի, կ'աղաչեմ, ինչ որ ուզէք կ'ընեմ... Ժերմէն գրեց զանի, անոր արցունքները սրբեց:

— Այլ լմացաւ, հաշտուինք ու անգամ մ'ալ չընենք հա՛, աւելցուց մատովը անոր սպանաւորով:

— Երբեք, գոչեց փոքրիկ ֆէլլահ աղջիկը, եթէ վնասուիմ ալ, ձեր և ոչ մէկ խօսքը ուրիշին չպիտի ըսեմ:

— Շատ լաւ, յայտարարեց Ժերմէն. հիմա, գործերնիս լմացունենք:

զինքը Արեւելի քրիստոնէից Պաշտպան կը յորջորջէ. Այս նիդակակցութեամբ Ռուսիա զինքը մեզց այնպիսի ընթացքէ մը՝ որուն կայր զիտոյն հեռեւելով Յրանալի իր շահերը բոլորովին վտանգեց և Ռուսիան ալ իր նպատակին հաւառ, այն է՝ Տաճկաստանի տկարացումը:

Պահ մը ենթադրենք թէ Սան-Սթեֆանոյի դաշնադրութեան 16րդ. յօդուածը միայն գոյաթիւն ունենար և գործէինք ճիշդ ու ճիշդ այն կերպով որ մինչև այսօր Պերլինի դաշնադրութեան վրայ յոյս տածելով գործեցինք. Ինչ պիտի հետեւեր ասկէ. Պատիւանը շատ պարզ է. Ռուսիա մեզ հետ պիտի վարուէր այնպէս՝ ինչպէս գալը ոչ խաբին հետ:

Հայ ապրիլ ուզել և Արեւելի ամենէն զարգացեալ ժողովուրդը ըլլալով իր զրացիներուն ալ զարգացման, հետեւաբար զօրացման ամենամեծ սատարողն ըլլալ. ահա Ռուսիոյ համար մեր ամենամեծ յանգանքը, որուն երբեք պիտի չուզէ ներել. Հիմա կուհիմա այսչափ:

Մեր յաջորդ յօդուածով պիտի ջանանք պարզել Ռուսիոյ ընթացքը Պարսկաստանի նկատմամբ և Պարսկաստանի զիրքը:

Ս. Մ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Օր. Նոյեմի Աշքեանի և Տիար Յարութիւն Կիւլպէնկեանի ամուսնութիւնը տեղի ունեցել է Հոկտեմբեր 28ին ի Գառն-գիւղ, այդ աշխարհիկ հարսանիքին վրայ հետեւեալ մանրամասնութիւնները կը բաղենք «Արեւելք»էն:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Երէկ առտու, Գառնգիւղ, Կիւլպէնկեանց Մօտայի բնակարանին մէջ տեղի ունեցաւ Յարութիւն և Գ. Կիւլպէնկեանի ամուսնութիւնը ընդ Օր. Նոյեմի Աշքեանի. Ժամը 4ին, հարսանական հրաւիրեալները հետեւ հետէ կը հասնէին, որոնք կը բաղկանային Կիւլպէնկեան գերդաստանի ազգականներէն և բազմաթիւ բարեկամներէն ու ծանօթներէն. Ժամը 4 ու կէսին սկսաւ պսակադրութեան հանդէսը, որուն կը նախագահէր Տ. Գեորգ Եպիսկոպոս Երեցեան, իր շուրջը ունենալով Գառնգիւղի բահանայից դասը, կնքահարութեամբ Ալի. Պարսիկ և Գ. Կիւլպէնկեանի Պատիկ Խորհուրդին աւարտուէն յետոյ՝ Գեորգ Սրբազան հակիրճ քարոզ մը խօսեցաւ, որուն մէջ բացատրե-

Սթա Ապուհայ՝ հիւ, ոտը ելաւ, և ծամ մը շարունակ, կրած վիշտէն դեռ տառապաղին զրեթէ, լուռ ու մռնոյ աշխատեցաւ, առանց խօսք մը արտասանելու:

Ժերմէն ալ շատ աշխատեցաւ. երբ զիրենք կէս օրուան ճաշի կանչելու եկան, սենեակը գրեթէ պատրաստ էր:

— Դուք զացէք, ըսաւ Սթա Ապուհայ, դեռ քանի մը բոյսեր կան գնելիք և փետրաւելով անգամ մ'ալ մաքրելու բաներ կան՝ ինծի ապացուցանելու համար որ ներեցիք ինծի, թողէք որ ամեն բան լիցնեմ, վերջը երբ դանաք հոս, զոհ պիտի ըլլաք... կը թողուք... այնպէս չէ:

Չայրը նորեն շողմոյշ կ'ըլլար, աչքերը աւելի աղերսարկու էին քան շրթունքները, Ժերմէն համբուրեց զանի, սրտայուզ, և յօժարեցաւ ձգել երթալու:

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՒՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ԳԱՅԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԻԹԻԹԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵԼԻ ՆԱԽԻՆ ԶԱՐԹԻԹԷԻ ՇԷՆՔԸ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խոփիլին Պուտան բնակիչը ճամբորդութեան խնամքով պաշտօնական որոշում է:

Նորին Բարձրութիւնը պիտի մեկնի Գաւառէն ամսոյ 28ին և վերադարձը տեղի պիտի ունենայ գետնով: 11ին:

Խոփիլը քանի մը ժամ վատի—չափաւ և քանի մը ժամ ալ Պէրպէր պիտի մնայ: Ամբողջ ճամբորդութիւնը տասը մէկ օր պիտի տեւի:

Վերադարձին Նորին Բարձրութիւնը ամբողջ օր մը Աստան պիտի անցնէ ջրամբարներու աշխատութիւնները այցելելու համար:

Ն. Բ. Խոփիլին պիտի ընկերանան Մահի Սանիէի բարձրաստիճան պաշտօններէն Հասան փաշա Աւէմ, Ահմէտ փաշա Ջէրի, Պրոպէր պէյ, Ժոզէֆ պէյ Պիլիմարի Մուհամմէտ Էֆէնտի Էմին, Ազիզ պէյ Իպզէթ, և ուրիշ քանի մը պաշտօնեաներ:

—Լորտ Բրոմըր երէկ առտու Ծուկէսի էքսքրեսով Աղեքսանդրիա իջաւ Խոփիլին հետ խորհրդակցութիւն մը ունենալու համար Ռաս-էլ-Թիլի պալատին մէջ:

—Թառաշիկայ շարժած օր Անգլիոյ Էտուար Է. Թագաւորին ծննդեան 60րդ տարեդարձին առթիւ, Պ. Կուլտ' Աղեքսանդրիոյ Անգլիական ընդհանուր հիւպատոսը ընդունելութիւն մը պիտի կատարէ կէս օրէն յետոյ ժամը 3 ու կէսին:

—Խոփիլին վերադարձը տօնելու համար կազմուած յանձնաժողովին կողմէ, բացուած հանգանակութեան գումարը 904 ոսկի կը բարձրանար մինչև կիրակի օր:

ՎԵՐՁԻՆ ԺԱՄ

ՀԱՎԱՍՏԻ ԳՈՐԾԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՉ, 4 Նոյեմբ. — Յրանքօ—Տաճկական միջադէպին առթիւ հարցապնդումի մը հետեւեալ Երեսփոխանական ժողովը 77ի դէմ 308 ձայնով ընդունեց օրակարգ մը որով կառավարութեան վրայ վստահութիւն կարտադրուի, Յրանքայի շահերը և պատիւը յարգել տալուն համար:

Օրագնացութեան յանձնաժողովը որոշեց Տեօշի 100,000 ֆրանքոյց պարգև տալ Պ. Սանթօս—Տրուսօնի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐԻՉ, 2 Նոյեմբ. — Սուլթանը՝ Բայեզիտ Ժողովարանի նախագահով մը ճամբայ ելլելը իմանալուն պէս, հասնութիւն յայտնեց Յրանքայի պահանջներուն գոհացում:

—Ինչ ընենք, ալ չէ չեմ կրնար ըսել... կամապաշտ աղջիկ:

Բայց աղջիկը կը փաբեր անոր և համբուրի մը մէջ՝ շատ ցած ձայնով. «ուրեմ իրաւ չէ, սխալք եմ ուրեմ»:

—Ինչ, ինչ բան իրաւ չէ, հարցոց խեղճ:

—Կենցեղ ըսեմ, մի յանդիմանէր զի... այնպէս կը մտածէի... այնպէս կարծած էի որ... որովհետեւ ան ձեզ կը սիրէ... զուգալ...:

—Ես ալ... Սթա Ապուհա, դուն խենթ ես, խենթ, կ'իմանաս, ալ այդպէս բան երբեք չըսես ինծի... երբեք: Ու խեղճ, որուն գէմը արեւն հոսում մը կը բուսրաւ վառէր, փախաւ գնաց, Սթա Ապուհան բուրովին շուարած թողում: Փոքրիկ հանճարները արդէն սեղան նստած էին երբ խեղճը երեցաւ:

տալ, բայց Հանրապետութեան կառավարութիւնը մարտահաւերը հա չպիտի կանչէ ասանկ տարած երաշխիքներու վրայ, և միայն զրաւ է օգտուիլ պարագաներէն Բ. Դան հետ ունեցած բոլոր առկա խնդիրները լուծելու համար:

(ՀԱՎԱՍ)

ՍԷՆ ԲԷԹՐՍՊՈՐԿ, 2 Նոյեմբ. — Զուրացուի որ Բէքիւնի մէջ բանակցութիւններ կը կատարուին Մանչուրիի խնդիրը լուծելու համար, բայց կը վստահեցնեն թէ ուսական առաջարկութիւններուն մէջ Մեծն Բրիտանիոյ շահերուն դէմ բնաւ բան մը չի կայ:

ԼՈՆԾՈՆ, 2 Նոյեմբ. — «Սթանտարտ» Շանհայէն կիմանայ թէ Եանկ-Չիլի փոխարքաներու սատակ ընդդիմութեան հետեւեալ կայսրուհին որոշած է մէջ տեղ հանել Մանչուրիի պայմանագրութիւնը:

ԲԱՐԻՉ, 2 Նոյեմբ. — Սուլթանը յանձն կ'անէ առանց յապաղման կարգադրել Լորանտի և ուրիշներու պահանջները, եթէ նախաժամիրը հա կանչուի: Պ. Տէքաւէ երաշխաւորութիւններ կը պահանջէ: Պատճառներ կան կարծելու թէ Յրանքան կը պահանջէ միեւնոյն ատեն որ ըրիտօնեաները պաշտպանելու և դպրոցներ բանալու իր իրաւունքները ճանչցուին:

ԲԷԲԻՆ, 3 Նոյեմբ. — Միսիոնարները կը ծանուցանեն թէ Կայսրուհին սպաննելու փորձ մը եղած է առանց յաջողութեան:

Յարձակողը սուրի հարուածներու տակ հոգին աւանդած է:

ԼՆՈՏՈՆ, 3 Նոյեմբ. — Թագուհին քանի մը հազար ծխափողեր (թիբա) ապրսւ պրեց: Այդ ծխափողերը արծաթապատ պիտի ըլլան և պիտի կրեն արքայական թագը և սկզբնաւոր մը և ծնունդի առթիւ իբրի նուր պիտի բաժնուին լիբիկէի մէջ ծառայող զինուորներուն:

ՊԵՍՍ, 3 Նոյեմբ. — 3500 նաւահանգստի գործաւորներ օրակարգ մը քուէարկեցին որով կը գովաբանեն ընդհանուր գործադուլը:

Ա Ձ Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԵՏԵՐ ՓԷՇԵՏԻՄԱԼՃԵԱՆ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահիթէ կ'իյնայ ըլլալով, պատրաստ է դաշնակի դասեր տալ, նորագոյն մէթոտով, իրեն դիմող աշակերտաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մամաբեանի գրասենեակը, Պապ-Էլ-Հալիս փողոց թիւ 31:

2—20

Եւ իրաւ ալ, ինչ էր ինքը անոր համար, իրմէ թողակ առնող աղւոր աղջիկ մը, շատ հեռուէն եկած, ծնողք կամ որ և է պաշտպան չունեցող վարձկան մը:

Պալատին կիներէն իմացած, քանի մը երուպացի կիներու իրեն տուած կարճատեւ այցելութեանց միջոցին լուծ հազար ու մէկ պատմութիւններէն հասկցած էր որ այրերը, մանաւանդ աւելցնելով բրնձները որչափ քիչ կարեւորութիւն կուտան կանանց. կարծիք՝ զոր արեւելեան երուպացիներու (levantine) չափազանց թիթեարայ վարժունքը շատ իսկ կ'արգարացնէ:

(Շարունակելի)

Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

ըէ յետոյ՝ ամուսնութեան սրբութիւնը ու նուիրականութիւնը, հարսին ու փեսային զրուարիքը ըրաւ, և Ազգին երկու ծանօթ ընտանիքներու այս բարեգէտ խնամութեան առթիւ իր շնորհաւորութիւնները յայտնեց: Տ. Գեորգ եպիսկ. յայտնեց թէ Երուսաղէմի Տ. Գարութիւն Սրբազան Պատրիարքը և Ս. Գալոբեանց միաբանութիւնը մասնաւորապէս սաշտօն յանձնած էին հետազոտով իրենց մաղթանքները կրկնել՝ այս ամուսնութեան առթիւ: Տ. Երէցեան Սրբազան իր խօսքը աւարտեց ամուսնական երջանկութիւն մաղթելով նորապսակ ամուսիններու յետոյ Տ. Գեորգ եպիսկոպոս Պատրիկ էֆ. յայտնեց Տ. Գարութիւն Ս. Պատրիարքին ուղղած հեռագիրը: Պատրիարքութենէն յետոյ շնորհաւորութիւնները տեղի ունեցան:

Տիկին Նոյեմի Կիւպլէնկեանի ընդունած նուէրներուն մէջ աչքի կը զարնէին Տէր և Տիկին Պ. Կիւպլէնկեանի կողմէ 5,000 ֆր. չէք մը, Գարութիւն էֆ. Կիւպլէնկեանի կողմէ իր կնոջ նուիրուած ազամանդակու քայլ մը և մատանի մը, Տիկին Հոփիսիմէ Մանուկեանի և օրդուց կողմէ սեղանի ալմաթ սպասներ, հարսին ծնողաց կողմէ աշամանդադար թանկագին զոյգ մը օղ, Տէր և Տիկին Բէյեանի կողմէ ոսկի բաժակներ, Տէր և Տիկին Սիմեոն Բեանթապեան՝ աշամանդադար գնդասեղ մը, Տէր և Տիկին Պօղոս Քէրէսթեանն սուրճի ոսկերիք: Գաւառից, Գաւառի էֆ. Յ. Մանուկեան ազամանդադար քայլ մը, Այրի տիկին Մ. Մանուկեան՝ աշամանդակու քայլ մը, Աղա Մօլլա պարսիկ վաճառականը՝ թանկագին շալ մը, Եւտի գուլէի ազգ, որբանոցին աշակերտներէն՝ նորարուեալ գեղեցիկ բարձ մը ոսկեթել, Յ. Ն. Կ. սկզբնաւորներով, ծաղիկներով գեղեցիկ հիւս երկու ալմուներ արհեստանոցի որբերուն կողմէն որոնք գեղարուեստական սքանչելի ուղեք մըն ալ մատուցին: Որբանոցին աշակերտները, իրենց անօրէնքն առաջնորդութեամբ ներկայ էին հարսանեկան հանդէսին:

Ծաղիկափունջեր դրած էին Արիկ էֆ. Ունեան, Տէր և Տիկին Գարբիէ Սերիլի-Ջէն, Տէր և Տիկին Տիրան պէյ Կիւպլէնկեան, Այրի տիկին Վահան էֆ., Լիտի Սանտիւրն, Տիկին Վարդուհի Թիւրապեան, ինչպէս նաև շնորհաւորական բազմաթիւ հեռագրեր ու քարթեր:

Ժամը եօթին աւարտեցաւ հարսանեկան այս փայլուն հանդէսը ու հրաւիրեալները անգամ մըն ալ շնորհաւորելով հարսն ու փեսան, մեկնեցան: Յետոյ Տէր և Տիկին Կիւպլէնկեան Մօտայի քարափը իջան,

ուր Գարամանեան Գարութիւն էֆ. ի կողմէ զրկուած շոգեմակով Սիրքէնի անցան: Նորապսակ ամուսիններէ իրիկուան ճեպընթացով վիճնա ուղեորեցաւ ուրիշ Բաբիզ պիտի երթան և յետոյ Մարտիկոյ ճամբով պիտի վերադառնան:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԾԻԱՐՅԵՆ

ԿԻԷՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — «Նայէ Վիէնէր Թափալաւտ» կը հերքէ այն լուրը թէ Կրէտէի մասին մեծ պետութիւններու միջև բանակցութիւններ կը կատարուին Ռուսիոյ նախաձեռնութեամբ:

Ըստ վերոյիշեալ թերթին սեէ հաւորակցութիւն փոխանակուած չէ Ռուսիոյ և ուրիշ մեծ պետութեան մը միջև Կրէտէի Մայր Գունաստանի միութեան վերաբերմամբ:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԱՅՂԱՆԻՍՏԱՆ. — «Ռուսքի Էնվալաւտ» ռուս պաշտօնական թերթը կը հերքէ այն տեղեկութիւնները որոնք տրուեցան օտար մամուլին կողմէ Ապտուր—Ռահման խանի մահուընէ քիչ ետքը, ըստ որոնց ռուս պատերազմական նախարարութիւնը պետք եղած պատրաստութիւնները կը տեսնէր ռուսական հողերուն սահմանաւ, կից աֆղան զաւառներուն մէջ ծագելիք խռովութիւններուն հանդէպ:

ԹԷՀՐԱՆԻ ԴԱՒԱԳՏՈՒԹԻՒՆԸ. — Ահաւսիկ Շահին դէմ եղած զաւակցութեան մասին մէկ քանի նոր տեղեկութիւններ:

Դաւակցիները միացած էին յոյսերին զնելով ժողովուրդին ձեռնադրութեան վրայ որ սաստիկ զգոճ էր թէ Շահը կը փափաքէր նոր փոխադրութիւն մը ընել Մէշէտ ուստաֆաշուքեան երթալու և նոր ճամբորդութիւն մը կատարելու Եւրոպա:

Զեբրակարդներուն թիւին մէջ կը գրանուի հարուստ անձնաւորութիւն մը զոր մերկանդամ և շղթայակալ պարտուցին թէհրանի փողոցներուն մէջ:

Շահին բժիշկին և ոչ թէ մեծ եպարգոյր որ վստահուած է այս գործին մէջ:

ՅԻՄՆԱՅԻ ԿՐՕՆԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԵՐԸ. — Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ կայսերական իրաւէի մը համաձայն Յրանքային արտաքինութեան կրօնական միաբանութիւններուն արգելուած է Տաճկաստան հաստատուիլ:

Այս իրաւուն հիմնուած է իսկ մը պատճառներու վրայ որոնք ցոյց կուտան թէ ֆրանսական կառավարութիւնը ինքնին օրէնքով մը այս միաբանութիւնները փաստակարգաւոր է հանրային ապահովութեան:

Յանկարծակի ոտքերուն առջև բացուած անգուրդի մը տեսիլը զինքը աւելի մեծ սարսափով մը չպիտի ցնցէր: Ինչ որ պատիկ ֆէլլաճ աղջիկը պարզամտութեամբ իր աշակերտին փոփոցած էր, որ ինքն ալ կրնային մտքերնուն անցունել, բարձրաձայն ըսել այն բանը. ինչ ամբողջ:

Այսպէս ուրեմ, այն քաղաքավարութիւնը զոր Մուրատ իրեն նկատմամբ գործածած էր, համակրութիւնը զոր իրենց ուցուցած էր և որմէ կը սկսէր շլմորած զգալ ինքզինքը, այն բարեքնները զոր այնչափ շուտով ստացած էր անկէ, և որ բոլոր ճակատները իր առջև խոնարհեցուցած էին, այն վեհ զգացումները զոր հիացմամբ կը տեսնէր անոր մէջ և որ զանի իրեն համար միւս մարդոյմէ այնչափ վեր և յարգի կ'ընէին, ուրիշ այս ամենուն շարժառիթը զինքը հրապուրելու միակ նպատակն էր...:

Սթա Ապուհա ուզածը ձեռք բերած էր. փաշային խոհարարը Ժերմէնի համար եւրոպական ճաշ մը կը պատրաստէր, որուն կը մասնակցէին աղաքները: Երեքին ալ կեւրակուրը կուտային փաբիկ սրահի մը մէջ որ հանձնարուին սենեակին կից էր և որ անոր պէս ընդարձակ պատշգամի մը վրայ կը բացուէր:

Աղջիկները կը լափէին. Ժերմէն, մտադբաղ՝ անոնց կը նայէր. իր առջև իրարու յաջորդող կերակուրներուն հազիւ ձեռք զրպցունելով, անթօթափելի գաղափար մը զինքը կը հաւածէր: Սթա Ապուհա ըսած էր. — փաշան ձեզ կը սիրէ, և կը կարծէի որ զուգ ալ...: Ինչն ալ մի...:

Սթա Ապուհա զինքը բրնձնէն սիրուած կը կարծէր... նոյն իսկ զինքն ալ զանի սիրելու պատրաստ ու յօծար կ'ենթադրէր:

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՍՏԱՑԵԱՆ 1843 ՊՆ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՉԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դուրսիւնները կը գտնուին խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագիրը և ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուիք. — Առատաձեւն պայմանները
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԵՐԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար: Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 8 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Յրանսայի և օտար երկրներու վրայ կ'աւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եզրապտտի և արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիրեա, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԵՄԱՆՈՒՄ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բի.

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէրուս, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Երբ Կեանքաւոր նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՔԻՆ, ՀՕՏԷՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուքի ամեն մասնաճիւղերուն:

1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց,

Ս. ԵՒ Ս. ՍԻՏԱՐԻԻ ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԴԵՄՐ

Ապրանաց զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Յրանսական

Շնոկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷԲ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱԲ

ԱՐ ՄԱՐ

ՅԵՑԱԼ

ԲԱՐԻՉ

1900



ՄԱՆՑ

ԿԻՒՄԻՏԵ

ԵՒ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՁԻ ՆՈՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱԻՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԷՉ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆԲԸՐԷՐՈՐ ՆԻՔՈԼԱ տրղթ. թան. 3500	ՉԻՍԱՉՈՅ տարադրութիւն թան. 3500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 3500	ՉԱՐ " " 3500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի Օսէսա, հանդիպելով ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԻԶՄԻՐ, ՏՍՐԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ ուր կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգենաւներուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԵՌՎՈՒ ՍՍԻԱԿԱՆ ԵԶԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱԶՁԻ ԵՌՎ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅԱ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ՔԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՍԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Թոքսան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Միլի. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլիէն Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր.

Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եզրապտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաջուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փխսում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԻԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԻԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղբուրային գեղերու նման չի խանգարել ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

12—346